

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ունիւթիւթիւթը բայց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԹԻՖԼԻՍԻ ԵՐԴՈՒԽԱԼ ՀԱՌԱՏԱՐՄԱՏԱՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ ԽՐՈՂ-
րում են՝ Արարչութեան տնային խմբակի 3-ին վարչական կառավարման տարի
օգնական

ԳԵՈՐԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԱՏՈՎՄԵԱՆԻ

ընկերներին եւ ծանօթներին՝ չնոր՝ բերել կիրակի, յունվարի 27-ին, Վանքի մայր-եկե-
ղեցին՝ ներկայ լինելու նրա հոգեհանգստին:

Եւգոր եւ Տիգրան Միքայէլեան Շաղինեանցները, Վարդան Միքայէլեան Նաղա-
րեանց, Աննա Միքայէլեան Բաղդասարեանց եւ Նատայիա Վարդանեան Շաղինեանց՝
յայտնելով առաջինները իրանց հօրեղբոր եւ վերջինը իր տաղեր՝ Թիֆլիսի տնտեսական
պատուաւր քաղաքացի

ԳԱՐԻԷԼ ԵԱԳՕՐԵԱՆ ԶԱԴԻՆԵԱՆՑԻ

մահը խնդրում են ազգականներին եւ ծանօթներին չնոր՝ բերել հանգուցեայ յուղար-
կաւորութեանը, որը լինելու է կիրակի, ամսին 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր
սեփական տնից (Արարչութեան տնային խմբակի 3-րդ փողոց, № 4) դէպի ս. Նշան եկեղեցին:
Ամբիժքը չարաթ, երեկոյան ժամը 6-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց,
Մատենադրութիւն. Նամակ Ունիւթիւթիւթի.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ար-
տաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար.
—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պրոֆէսոր Օգիւստ Կարրիէր.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Թիֆլիսի փողոցներում, բակերում ամեն օր
տեսնում էք մարդկանց, որոնք մի առանձին,
երեւի իրանց արհեստին միայն յատկացրած
կոկորդային—խուպտ ձայնով յայտարարում են,
թէ հին չորեր են աճում եւ ծէս է դուր այդ
մարդկանցից մէկին հարցնէք, թէ ինչ տներում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՕՖԵՍՐ ՕԳԻՒԻՍ ԿԱՐՐԻԷՐ

Ամսին 14-ին վախճանած պրոֆէսոր Օ. Կար-
րիէր վերջին տասն տարեկան ընթացքում առան-
ձին ուշադրութիւն դրաւ այդ չարք հետազո-
տութիւնների, որոնց բոլորի առարկան էր,
ուղղակի կամ անուղղակի, Մ. Ուրբեանցու
պատմութիւնն էր:

Այս հետազոտութիւններից առաջինը լոյս
տեսաւ 1891-ին եւ կրում էր վերնագիր «Moïse
de Khoren et les Généalogies patriarchales»
(«Մովսէս Ուրբեանցի եւ նախնային ծննդա-
րանութիւնը»): Այստեղ Օ. Կարրիէր աշխատել
է մաթեմատիկական ապացուցանել, թէ Մով-
սէս Ուրբեանցի եւ նրա համարված աղբիւր
Մար-Արաւս Կատիւն մի եւ նոյն անձն են,
որի խօսքով Մ. Ուրբեանցին չէ ունեցել Մար-
Արաւսեան աղբիւր, այլ ինքն է հարկել նրան:
Յաջորդ հետազոտութիւնը լոյս տեսաւ
1893-ին «Հանդէս Ամսօրեայում» ֆրանսերէն
ընթացում եւ հայերէն թարգմանութեամբ եւ
կոչվում էր «Mouvelles sources de Moïse de
Khoren» («Մովսէս Ուրբեանցու նոր աղբիւր-
ներ»): Որի շարունակութիւնը նոյն տեղում լոյս
տեսաւ յաջորդ 1894 թուին «Supplément» («Յա-
ւելում») վերնագրով: Այս հետազոտութեան
մէջ հանգուցեայ գիտնականը աշխատում էր
թոյց տալ, որ Ուրբեանցին իր պատմութիւնը
գրելու համար գործ է ածել վեցերորդ եւ եօթ-
ներորդ դարերում գրված ու թարգմանված գա-
նազան աղբիւրներ, որոնց մէջ նաեւ Սոկրատի
եկեղեցական պատմութեան եւ Ս. Սեղբեանոր
մի վարքի հայերէն թարգմանութիւնները, եւ

են շատ լինում ծախու հին չորեր, նա կը պա-
տահանէ. «այս տներում, ուր հայ տէրերն է
ապրում»:

Ինձ պատմեցին հետեւեալը: Կայ մի քահա-
նայ, որ վաղուց է թողել իր պաշտօնը: Բայց
մինչեւ այսօր էլ, երբ հնախմբած կանգ է
առնում նրա բակում, նա դուրս թափել է
տալին հին չորերի ամբողջ կոյտեր եւ սկսում
է սակարկութիւն գնելի ծախի:
Ի՞նչպէս են գոյանում հին չորերի պահեստ-
ները մեր տէրտէրների տներում:
Այս հարցը մեզ տանում է նախ եւ առաջ
դէպի հայոց լեզուի բառարանը: Բայց արեւ
հենց վեցերորդ «Առանձին Բառարանի» մէջ Կ.
տաւր, որոնցից է «կողպուտ» բառը: Դուք կը
գտնէք այսպիսի բացատրութիւն. «կողպուտ—
թալան»: Ուրիշ միջոց չունի այս բառը:
Ի՞նչ էք դուք երեւակայում, երբ լսում էք
«կողպուտ» բառը: Անշուշտ մի դժբախտու-

արանից եղբակցանք էր, որ Ուրբեանցու պատ-
մութիւնը ուրեմն գրված պէտք է լինի ոչ վաղ
քան ութերորդ դարի սկիզբները:

Մի տարի յետոյ, 1895-ին նա հրատարակեց
մի ուրիշ աշխատութիւն—«La légende d'Abgar
dans l'Histoire d'Arménie de Moïse de Khoren»
(«Աբգարի զրոյցը Մովսէս Ուրբեանցու
հայոց պատմութեան մէջ»): Այս աշխատու-
թեան մէջ, որ մեր կարծիքով ամենաշոգուն է
նրա հետազոտութիւնների շարքում, նա մի առ-
մի համեմատում է բոլորը ինչ որ գրել է Մ. Ուր-
բեանցին Արաւսի, Արգաթի, Անանիայի եւ Սա-
նատրուկի մասին՝ նրա գործածած աղբիւրների
—Լաւրենցիայի եւ Նեսեփիոս Կեսարացու եկե-
ղեցական պատմութեան հետ: Համեմատութիւ-
նից երեւում է, թէ ինչպէս Ուրբեանցին միա-
ժամանակ թէ բարեխիղճ եւ թէ կամայական
կերպով օգտվում է աղբիւրներից, եւ որչափ
պատմական սխալներ է անում:

Մի ուրիշ աշխատութեան մէջ, որ լոյս տե-
սաւ 1899 թուին—«Les huit sanctuaires de
l'Arménie payenne, d'après Agathange et
Moïse de Khoren» («Հին անուշահայտնի ութ
մեհակները ըստ Ագաթանգեղոսի եւ Մ. Ուր-
բեանցու») Օ. Կարրիէր ցոյց է տալիս, թէ այն
բոլորը, ինչ որ Ուրբեանցին աւանդում է հայոց
հեթանոսական աստուածութիւնների ու նրանց
պաշտամունքի մասին՝ առել է Ագաթանգեղո-
սից, որս գործածած հայկական անունների փո-
խարէն համապատասխան յունական անունները
գործածելով, ուստի եւ նրա հաղորդած տեղե-
կութիւնները հայոց հեթանոսական աստուա-
ծութիւնների մասին ոչ մի արժէք չունեն:

Յիշելու է հանգուցեայ պրոֆէսորի եւ մի
գիւտը, որ շատ իրարանցում ձգեց հայ բանա-
սիրութեանը զբաղումների մէջ: 1897 թուին
«Հանդէս Ամսօրեայում» նա յայտնեց, թէ գտել է
Մար-Արաւսի պատմութեան ասորերէն խմբիւր,

թիւն, որ պատահում է մարդուն բացառիկ
գէպերում: Դուք երեւակայում էք սղառա-
ղեմած աւաղակներ, քրդեր, բաշիբոզուկներ,
ընկած են արեւոտոված դիակներ եւ նրանց
թալանում են խղճի եւ սեփականութեան մա-
սին ոչինչ հավակցողութիւն չունեցող վայրե-
նիները:

Այս է կողպուտը: Բայց այս բառը հին ժա-
մանակներից ունի եւ մի մասնաւոր նշանակու-
թիւն: Նա մեր քահանաների արդիւններից
մէկի անունն է եւ գոյութիւն ունի մինչեւ
մեր օրերը, գոյութիւն ունի Թիֆլիսի պէս մի
քաղաքում, օրը ցերեկով, քահանայից դարձ
սկզբում ձիւտ է, բայց մի քիչ բարեփոխված
է. նրա մէջ աւելացրած է մի հատ «ը» տառը,
այնպէս որ գոյացել է ոչ թէ «կողպուտ», այլ
«կողպուտը»: Բայց դա մի պարզ աղաւա-
ղումն է, որ այնքան շատ է պատահում ժողո-
վրդական լեզուի մէջ: Գտնէ այսպէս է առում
այն գործողութիւնը, որ այժմ յայտնի է «կո-
ղպուտ» անունով:

Մի կատարեալ պատուհաս է, ընթերցող,
Թիֆլիսում մեռնելու Դմիտրի, ի հարկէ, հա-
րստանների մասին չէ, որոնք կարող են եւ չը
սարսափել Թիֆլիսի քահանաների կողպուտից:
Ես ճանաչում եմ շատ գաւառացիներ, որոնք
տեսել են, գիտեն թէ ինչ են «քաղքի աղաթ-
ները» մեռնելովի ժամանակ եւ անկեղծաբար
ասում են, թէ իրանք շատ գոհ կը լինէին, ե-
թէ մեռնելուց յետոյ թաղվէին իրանց հայրենի-
քում, ուր չը կայ «կողպուտ» սխալմամբ կամ
գոյութիւն ունի աւելի մեղմ, մարդավարի չա-
փերով:

Սա ձիւտ է: Թիֆլիսի հողում գերեզման գտ-
նելու բախտը մի կանոնաւոր, սխալմամբ
կողպուտի ենթարկվելու միջոցով միայն կա-
րելի է ձեռք բերել: Չունենալ ընտանիքների
համար դա մի կատարեալ դժբախտութիւն է:

Նայելով այդ կողպուտի սխալմամբ սկզբից
մինչեւ վերջը, քրքրելով կողպուտի բոլոր կա-
նոնները, դուք գալիս եք այն եղբակցութեան
որ հայ տէրտէրների ուղղակի հանձնարներ են
հարկեր ստեղծելու գործի մէջ: Մահը սարսափ
ազդող մի երեւոյթ է: Մարդկութիւնը դարերի

որը շուտով, մանրամասն ուսումնասիրութիւնից
յետոյ, լոյս կընայէ: Ինչպէս յետագայ տեղե-
կութիւններից երեւց, այս նորագիտ Մար-
Արաւս ոչ մի յարաբերութիւն չունի այն պատ-
մական չրքանի հետ, որի պատմութիւնը Ուրբե-
նացին քաղել է իր Մար-Արաւսից, եւ թէպէտ
այս նոր Մար-Արաւս մինչեւ այժմ էլ չը հրա-
տարարվել, բայց այն օրերու գտնէ ունեցաւ,
որ Օ. Կարրիէր ինքն էլ խոստովանեց, թէ Ուր-
բեանցու ժամանակ գոյութիւն ունեցել է Մար-
Արաւս անունով մի ժամանակագիր՝ յայտնի հըն-
չակ ունեցող, այսինքն՝ յետ առաւ 1891 թուին
յայտնած եւ 1895 թուին կրկնած կարծիքը,
թէ Ուրբեանցի եւ Մար-Արաւս մի եւ նոյն անձն
են:

Հանգուցեայ հայագէտի վերջինչալ աշխա-
տութիւնները մեծ հետաքրքրութիւն չարժեցին
հայագէտների մէջ անցեալ տասնամակում, եւ
Ուրբեանցու պատմութեան ընթացաւորութեան մի
եռանդուն գործունէութիւն սկսվեց, որովհետեւ
նրա ամեն մի եղբակցութիւնը կարեւոր ու
հետաքրքրական հարցեր էր շուրջում Ուրբեան-
ցու պատմութեան արժանահատութեան,
գրութեան ժամանակի եւ հեղինակի անձնաւո-
րութեան նկատմամբ: Նրա ամեն մի հետազո-
տութիւնը, որչափ էլ համոզու լինէր ծաւալով,
առաջ էր բերում մի շարք թեր եւ դէմ կար-
ծիքներ եւ վիճաբանութիւններ, որոնց չնորհիւ
հետզհետէ լուսաբանվում էին Ուրբեանցուն եւ
հայոց հին գրականութեան վերաբերեալ զանազան
հարցեր: Այս վիճաբանութիւններն ի միջի այլոց
առիթ եղան լոյս ընծայելու մինչեւ այն ժամա-
նակ անտիպ մնացած կարեւոր պատմական—մա-
տենագրական երկասիրութիւններ (Սոկրատ,
Սեղբեանոր): Հայ հեղինակների մէջ էլ եղան
բանասերներ, որոնք հետեւեցին Օ. Կարրիէրի
մեղմացող ընթացաւորական ուղղութեան եւ
նրանից աւելի ծայրայեղութիւնների հասան:

սկզբից այդ սարսափահար երեւոյթի հետ կա-
պել է անթիւ հաւատալիքներ, նախապաշար-
մունքներ: Հայերի մէջ անյիշելի ժամանակնե-
րից է առաջ եկել այն հաւատալիքը, թէ մե-
ռելը շարունակում է ապրել եւ հողի տակ:
Դրա վրա աւելացաւ քրիստոնէական վարդա-
պետութիւնը, որ հոգու փրկութեան համար
ստեղծեց ծէսեր, արարողութիւններ: Մեռել-
ների պաշտամունքը մեր ազգային յատկու-
թիւններից մէկն էր դեռ հեթանոսական ժա-
մանակներից: Քրիստոնէութիւնը մեզանում
նուիրագործեց այդ պաշտամունքը: Իսկ քահա-
նաների դասակարգը սկսեց շահագործել մե-
ռելների պաշտամունքը յօդուտ իր գրպանի:

Անա այրեցից էլ առաջացաւ կողպուտը:
Կողպուտն է մեռնելներին, կողպուտն է եւ
նրանց կենդանի մնացած բարեկամներին ու
ազգականներին:

Մի թաղում կատարելու համար սրբան ծախ-
ներ եւ հարկեր են հարկել: Բաւական է կար-
դալ տէրտէրների ներկայացրած հաշիւներից
մէկը: Դուք, հաւատացում եմ, կը սարսափէք:
Ես առիթ եմ ունեցել մի քանի այդ տեսակ
հաշիւների տեսնելու: Մի հասարակ արհեստա-
ւորի թաղման ժամանակ կատարած պատարա-
զի համար քահանան պահանջում է... 25 ռ.
միւս մանր մունք ծախները չեմ յիշում, բայց
գիտեմ, որ եկեղեցական յուղարկաւորութիւնը
տանից մինչեւ եկեղեցի եւ եկեղեցուց մինչեւ
գերեզմանատուն նստել է ինքզ ընտանիքին 75
րուբլի եւ ոչ պակաս:

Սա դեռ փողի հաշիւն է: Կողպուտը կա-
տարվում է եւ կողմնակի միջոցներով: Մեռելի
տէրը թաղման օրը պիտի սարքէ սեղան: Այդ
սեղանի վրա դրված է մի գլուխ շաքար եւ մի
եփած հաւ: Դրանք պատկանում են տէրտէրին:
Այնուհետեւ մի տարվայ թէ երկու տարվայ
ընթացքում—հաստատը չը գիտեմ—մեռելի տե-
րը իւրաքանչիւր նաւակատակին պիտի մի շաղ
հաւ ուղարկէ նոյն տէրտէրին:

Անցնում է թաղման օրը: Գալիս է տէրտէրը
սեղանին եւ դժբախտ մեռնելաւորների հետ աա-
կարկութիւն է սկսում իսկական կողպուտի
մասին: Ինչ ստացել է մինչեւ այդ փողով, հա-

Նրա հետազոտութիւնները սակայն աւելի
փայլուն, չրացուցիչ էին, քան հիմաւոր. ուստի
սկզբում շատ շատերին գրաւեցին իրանց ըստ
երեւոյթին անվիճելի ճշմարտութեամբ, մասնա-
ւոր նրանց, որոնք հնարաւորութիւն չունէին
քննելի հարցերը անձամբ ուսումնասիրել լուսն
աղբիւրների վրա: Այնպէս որ եղաւ մի կարճ
ժամանակ, երբ նրա մերկացումների աղբիւ-
րութեան տակ Ուրբեանցին գրելով բոլորովին
վարկազուրկ եղաւ: Բայց շուտով անցաւ բո-
ւաղական տպաւորութիւնը: Լոյս տեսան բազմա-
թիւ նոր հետազոտութիւններ, որոնք ցոյց
տուին, թէ Օ. Կարրիէրի եղբակցութիւնները
կատարելապէս ճիշտ չեն, եւ ահա նրա նախկին
կողմնակիցները կամայ կամայց սկսեցին հրա-
ժարվել իրանց ժամանակաւորապէս ընդունած
կարծիքներից Ուրբեանցու նկատմամբ:

Այս աշխատութիւններից զատ, որոնք բո-
լորը թարգմանված են հայերէն, հանգուցեայ
հայագէտը լոյս է ընծայել եւ ուրիշ գործեր,
օրինակ՝ հայերէնից ֆրանսերէն է թարգմանել
մի քանի անվաւորական գրութեան հին կառ-
կարանից, որոնց թւում է Կորնիլիանցի Թուրքի-
ան Պօղոս եւ սրա երրորդ Թուրքի Կորնիլիան-
ցիները, գրել է մի յօդուած Եզնիկի նորագիւտ
մի ասորական աղբիւրի մասին եւ այլն: Բայց
սրանք հայ բանասիրութեան համար այնքան
նշանակութիւն չունեցան:

Օ. Կարրիէր Պարիզի արեւելեան կենդանի
լեզուների վարժարանի քարտուղար էր 1873
թուից, իսկ պրոֆէսոր Դիւլիօրիէի մահից յետոյ
(1881-ին) նրա ամբողջ ժամանակը նոյն վարժա-
րանում, որը պատուով դրաւ ժող 20 տարի:
Նրա մահը գգալի կորուստ է հայագիտութեան
համար, մասնաւոր Յրանախաղում, ուր բանի-
բուն հայագէտներ շատ քիչ կան ներկայումս:
Ստ. Մ.

ւում կամ չաքարով—դա դեռ կողոպուտ չէ տէրտէրները պաշտօնական լեզուով կողոպուտը մեղսները սեփականութիւնն անենք է՝ Բանաստեղծները Կոմիտէի հանձնարարական շարքերը եւ տանում դարձում է իր պահեստում Ահա մեր են դիմում հին շորերը գնողները:

Ի հարկէ, ամբողջ կողոպուտը չէ ընկնում հնապաճառների համար բացված պահեստները: Մեր տէրտէրները միայն շորերը չեն կողոպտում, այլ աշխատում են ձեռք բերել եւ աւելի թանկագին իրեր—հանգուցեալի ոսկէ կամ արծաթէ քանարը, մատանիները եւ այլն: Իմ աչքի առջեւ մի երկուստարդ քանանայ պահանջում էր մի խեղճ, անօգնական այրիից նրա մեծածամուկն ոսկէ ժամացոյցը:

Ինչպէս տեսնում էք, բաւական զարգացած է մեր տէրտէրների մէջ հիմնաւոր կերպով կողոպուտը ճաշակն ու հասկացողութիւնը: Եւ նրանք, ի հարկէ, աշխատելով են ունենում: Երեւակայեցէք մի կողմից մի մարդ, որի համար արհեստ է դարձել մեղել թաղելը, երեւակայեցէք միւս կողմից մի որ եւ է դժբախտ մայր կամ կին, որ չլիւզած է մահվան հարուստից, որ միւլիթաութիւն է որոնում իր այրված արտի համար եւ այդ դառն րօպէներին ոչինչ ու ոչինչ չէ յիշում, բացի միայն իր թանկագին հանգուցեալի յիշատակը պաշտելուց, բացի նրա համար դէպի յաւիտենականութիւնը տանող մի ձիւշու ու հարթ ճանապարհ ստեղծելու մտքից: Եւ նա ոչինչ չէ խընայում, նա կեղեքում է իր մարմինը, արտառուցի առուներ է թափում իր սէրը յայտնելու համար, իր դժբախտութիւնը պատկերացնելու համար: Եւ միթէ նա պիտի կանգ առնէ մի ոսկի ժամացոյցի, մի քանի տասնեակ ռուբլիների առաջ: Ոչ, նա տալիս է, նա սակարկութիւն չէ անում: սգի սեւ օրերում քահանան է տիրապետողը նրա արտի մէջ, ինչպէս մի պաշտօնակար, որ այս աշխարհի եւ միւս աշխարհի մէջ միջնորդ է, որի ձեռքում են գտնվում միւս աշխարհի խորհուրդները, որի խօսքը, ձայնը պիտի առաջնորդեն թանկագին հանգուցեալին ստուգներին անյայտ, անեղ աշխարհում:

Այսպէս կողոպուտում է ընտանիքը: Գուցէ եթէ մոռնել կարողանաք վեր կենալ եւ խօսել, կասէր անպատճառ, թէ իր համար ամենից լաւը կը լինէր, որ իր թողած ոսկէ ժամացոյցը իր որբերին մնար, նրանց արտառուցները արբէր դժբախտութեան ժամերին: Բայց մեղսները չեն վեր կենում, չեն խօսում, կենդանի մնացածները չեն հասկանում, իսկ տէրտէրը հաւատացնում է, թէ ոսկի ժամացոյցը իր զրպանը պիտի մանէ իրեն կողոպուտ:

Կարող եմ հաւատացնել ձեզ, ընթերցող, որ ես շատ քիչ բան գիտեմ կողոպուտի պատմութիւնից: Համոզված եմ, որ այս չրջանում կատարվում են այնպիսի գործեր, որոնք կարող են նոյն իսկ ինձ էլ զարմացնել:

Պատմեմ մի ուրիշ դէպք էլ, որ դարձեալ քահանայական կողոպուտին է վերաբերվում:

Թիֆլիսի իւշիկները գերեզմանատան հողը փոխվել է ոսկու: Այնտեղ իւրաքանչիւր մաստ տեղը կարելի է ձեռք բերել ոսկու կշռով: Դուք ուզում էք մի փոքրիկ գերեզմանատան ունենալ այնտեղ ձեր հանգուցեալների համար: Իւշիկները ունի իր վարչութիւնը, դիմում էք նրան: Ձեզ մի մարդ են տալիս, արշինը ձեռքին եւ առաջարկում են տեղ ընտրել: Ընտրում էք: Ձեզ հետ եղած մարդը արշինով չափում է հողը, երեք արշինը քանն եւ հինգ ռուբլի: Այսպէս է նշանակված զինք: Եթէ դու կարող էք բազմաթիւ գերեզմանների պէս ժամերով սակարկութիւն անել, դուցէ ձեզ աշողովի մի բան պակասեցնել այդ ահարկու քնից, իսկ եթէ չէք կարող, եթէ ձեր տանը դրած է նոր մեծածի դագաղը, դուք այդ րօպէին խօսել էլ դժուարանում էք, պիտի հանէք փողը, կանխիկ վճարել, երեք արշինը քանն եւ հինգ ռուբլի: Եւ որովհետեւ երեք արշինը շատ փոքրիկ տեղ է, ձեզ հարկաւոր է ամենաբիւրջ դնել մի սաճեն տեղ, պիտի վճարէք ամբողջ 75 ռուբլի:

Ձեզ տալիս են անդորրագիր, եւ այդ անդորրագրից խանութ էք, Եր ձեր փողը ստացվում է յօդուտ քահանաների ապահովութեան գանձարանի: Ո՞վ է որոշել այդ չափը, ինչ հիման վրա, —այդ դուք չէ գիտէք: Ձեր առջեւ արշինը բռնած մի մարդ է, լուռ ու անտարբեր, եւ դուք պիտի կամայ աւանդաւոր համաձայնվէք, որ ձեզ կողոպտեն քահանաներին ապահովելու համար: Լաւ բան է ապահովելը, բայց անպատճառ մարդուն կողոպտելը ապահովութեան անունով—այդ միայն վայելում է կողոպուտների այն սխտեմին, որ

գործադրվում է մեր լուսավոր, փառաբանված Թիֆլիսում...

Ահա ինչ բան է, ընթերցող, կողոպուտը: Ոչ այն կողոպուտը, որ կատարվում է խուլ ճանապարհներին, իրեն յանցանք: որ զգուշի ու զատապարտելի է բոլոր երկրներում: Այլ այն կողոպուտը, որ նուիրագործված է իրեն հոգիների վրկութեան միջոց, իրեն մի սրբազան գործունէութիւն:

Եւ եթէ դուք, ընթերցող, տէրտէրական խուլ ու մտի միջոցով կողոպուտի ենթարկված մարդ չէք, —ձեզ կարող եմ շնորհաւորել...

Մ Ա Տ Ն Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Առողջապահական նուէր նորատի կանանց», Բժ. Ա. Բուրդուկանի. Սէքսանդրով, 1901, գինը 20 կոպ.

Մեր յայտնի ժողովրդականագետը Բժ. Բուրդուկանի այս աշխատութիւնը մի գեղեցիկ գործ է եւ ամեն տեսակէտից բաւարար: Թէ՛ մայի ընտրութեանը, թէ՛ չարագործեան ձեռք, թէ՛ լեզուի ցիրաւարտութեանը եւ թէ՛ տիպի ու թղթի գեղեցիկութեամբ կարող է նրա գրքերի լաւագոյնը համարվել:

Խօսելով բաւական մանրամասնօրէն յղի կնոջ առողջապահութեան մասին, նա անցնում է աղջկանի (ճնշկանի) առողջապահութեան, յետոյ ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է խընամել նորածնին եւ երկար կյանք է առնում նրա կերակրելու: ձեռի, ծծօթ ընտրութեան վրա եւ այլն: Այնուհետեւ նա նկարագրում է մանկական գլխաւոր հիւանդութիւնները, տալով պատշաճաւոր խորհուրդներ:

Գիրքը յարմարեցրած է ամեն դասակարգի քիչ ու շատ զարգացում ունեցող կանանց, որոնք կը գտնեն նրա մէջ գիտական-առողջապահական բազմաթիւ անհրաժեշտ տեղեկութիւններ: Ամեն մի տող պարունակում է իր մէջ մի օգտակար գիտելիք, մի գործնական խորատ Այս տեսակէտից «Առողջապահական նուէրը» տարբերվում է հեղինակի միւս գրքերէն, որոնց մէջ նա յաճախ թող է տուել իրան չեղելու բնարարից:

Գրքի մէջ գրաւորութիւնը նաեւ նրանում է, որ գրված է պոանձին սիրով դէպի չօչափած խնդիրը: Այդ սէրն արտայայտվում է իւրաքանչիւր էջում, բայց աւելի փայլում է վերջին գլխում: Սա «ձօր վերջին խօսքն է աղջկան»:

Եւ կը ցանկանայ այս երկու էջըրը առաջ բերել, եթէ տեղը սուղ էլ լինէր: Սակայն արտագրում ենք մի քանի տող:

«Թէ՛ մարմնով եւ թէ՛ հոգով կատարելապէս առողջ ես դու:

«Ի՞նչ այժմ քան եւ մէկ տարեկան ես եւ բոլորովին պատրաստ գոյութեան կուի համար կենալի ասպարէզ մտնելու:

«Ի՞նչ պատրաստ ես նաեւ ամուսնական կեանքի համար, ձեր հարսանիքի օրն էլ որոշված է, այսօր վաղը պոսկիդ է եւ դու պատրաստ ես նոր կեանք սկսելու: Կատարելապէս առողջութիւնդ կը լինի քս օփտը...

«Ձեր (քս եւ ամուսնու) մէջ պիտի տիրէ կատարելապէս ներգոյնակութիւն, որովհետեւ երկուսդ էլ ողջախոհ էք...

«Քո պարտականութիւնն է կրթել զուակնեւրիդ մէջ այն զգացմունքը, որ ազնայնութիւն է մարդու բնաւորութիւնը ամեն կողմից:

«Մրազան պարտքը թող լինի ներշնչել զաւակներդ, որ իրանց մայրենի լեզուի եւ աղջկան եկեղեցու ոգին համապաղ վառ պահեն իրանց արտերում...

«Ուրեմն, աղջիկս, միշտ առաջ, տես, ժամանակի ոգուց յետ չը մնաս: ապա թէ ոչ այլապէս, եւ սերունդի ոչնչանալը միանգամայն անխուսափելի է»:

Գիրքը 98 երեսից բաղկացած, արժէ միայն 20 կ. Գնեց՛ք եւ կարդացէ՛ք:

Բժ. Վ. Արծրունի

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունվարի 24-ին

Իմ խնդրանք համաձայն, էջմիածնի սինոդը վճռել է տալ ինձ միանգամ 300 ռուբլի եւ հրամանագրել է դեռ սրանից երկու ամիս առաջ Թիֆլիսի կոնսիստորիային՝ ի կատար ածել իր հրամանը: Բայց մինչեւ այսօր Վրաստանի եւ Իմթեթի կոնսիստորիան չէ բարենպաստ ոչ միայն կարգադրել այդ հրամանի կատարման մասին, այլ եւ զլանում է ինձ տեղեկութիւն տալ նրա մասին:

Ես չէի գրի այս տողերը, բայց մի հանգամանք է ինձ ստիպում անել այս: Հէնց որ սինոդի մի պատմական հրաման է գալիս կոնսիստորիայից չը յարգված մի որ եւ է քահանայի մասին—անյայաղ, առանց մի օր ուշա-

ցնելու ի կատար է ածվում: Օրինակներ չառնաւ Բայց իրանց չը սիրած քահանայի վարձատրութեան հրամանը ոչ թէ ամիսներով մնում է անկատար, ինչպէս այս դէպքում՝ այլ եւ դուցէ անհետեւանք:

Գաւիթ քահանայ Գիրգիդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի տանտէրերի համար հրատարակված է մի բրօշուր, որի մէջ զետեղված են խիստ հակողութեան եւ դաւապանքների վերաբերեալ կանոնադրութիւնները: Բրօշուրը աղված է 7000 օրինակ: Նրա մէջ զետեղված են թէ՛ ռուսերէն բնագիրը եւ թէ՛ վրացերէն ու հայերէն թարգմանութիւնները: Գինն է 15 կոպէկ:

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը առաջարկեց Թիֆլիսի ոստիկանապետին եւ գաւառապետներին մանրամասն տեղեկութիւններ հաղորդել նահանգական վարչութեանը իրանց չըմաններում գտնվող էթնագին գրադարանների եւ ժողովրդական գրադարաններին թեքարանների մասին: Հաղորդված տեղեկութիւնների մէջ պէտք է լինեն եւ մանրամասն ցուցակներ այն գրքերի, լրագիրների, ամսագիրների եւ այլ հրատարակութիւնների, որոնք կան այդ գրադարաններում եւ ընթերցարաններում:

Հինգշաբթի, յունվարի 24-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ տեղի ունեցաւ սահմարակցութեան գործադիր մասնաժողովի նիստը, որի ժամանակ զննվեցին քաղաքի առողջապահական պահանջներին վերաբերեալ մի քանի հարցեր: Այսպէս, ի միջի այլոց, ի նկատի առնելով այն վնասը, որ հասցնում են միները տնային տնտեսութեան եւ այն վտանգը, որ սպառնում են նրանք ժամանակի երեւալու դէպքում, մասնաժողովը որոշեց 500 ռուբլի նշանակել 1902 թվականի ընթացքում նրանց ոչնչացնելու նպատակով, վճարելով ամեն մի սատկեցրած միւս համար 5 կոպէկ: Որոշվեց նաեւ այս երկու թաղիքեայ բարակներ դնել Աղէլխանեանից այն հիւանդներին տեղափոխելու համար, որոնք չեն կարող ընդունվել քաղաքային ուրիշ հիւանդանոցներում: Վճարանութիւնների տեղիք տուեց այն միջնորդութեան հարցը, որ մտադրութիւն կայ յարուցանել կառավարութեան առաջ խնդրելով հիմնել Թիֆլիսում հաշտարար դատարանի օգնականի մի առանձին պաշտօն, որի պարտաւորութիւնը լիազանք քաղաքային զննելու սահմանափակ կանոնների դէմ քաղաքացիների կողմից գործված զեղծումները:

Վրաց ազնուականութեան պատգամաւորները Մօսկվա հասան յունվարի 20-ին: Կայարանում նրանց ընդունողներն Մօսկվայի նահանգական ազնուականութեան պարագլուխ իշխան Տրուբեցկոյ, գաւառական ազնուականութիւնների պարագլուխները եւ առանձին պատգամաւորներ ռուս ազնուականութեան կողմից: Կայարանից վրաց պատգամաւորները ուղևորվեցին նախ «Славянский Базар» հիւրանոցը եւ ապա ազնուականների ժողովարանը—ճաշկերոյթի, որ առաջարկել էր Մօսկվայի ազնուականութիւնը: Գալիկերոյթին մասնակցում էին 200 հոգի: Բացի Մօսկվայի նահանգի ազնուականներից՝ ճաշին ներկայ էին եւ Կազանի, Վլադիմիրի, Պսկովի, Նովոքոզնի, Պենզայի, Օրեոլի, Չերնիգովի եւ Սիմբիրսկի նահանգական ազնուականութեան պարագլուխները:

«Журналъ Министерства Юстиціи» հաղորդում է, թէ դատաւարական նոր կանոնագրքերի նախագիծը, որ արդէն մշակված է վերջնական—ձեռով, մօտ ժամանակներում կառավարվի պետական խորհրդի քննութեան: Համաձայն այդ նախագիծի՝ երգուեալ դատաւորների օրէնքը մտցնվում է, ի միջի այլոց, կուրանի չըմանում եւ Ձերնօժօրեան նահանգում բոլորովին նոյն հիմունքներով, որոնցով գործադրվում է նա Ռուսաստանի ներքին նահանգներում:

Ռուսական հակահրդեհային կայսերական ընկերութիւնը պատրաստութիւններ է տեսնում համառուական հակահրդեհային ժողով գույնարելու Մօսկվայում: Որպէս նպատակ այդ ընկերութեանը համաժողովի կազմակերպութեան գործում, ներքին գործերի միջնորդութիւնը նշանակել է 5,000 ռուբլի: Համաժողովի ամբողջ ծախքը հաշւած է 13,000 ռուբլի:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յունվարի 19-ին,

հասարակաց ժողովարանում կայացաւ ընդհանուր ժողով, որի պարագլուխն առաջինն էր Կառային կուրի շինութեան գործը: Ծարիներից ի վեր այդ հարցը արձարվում էր մեր կուրուս, վճովում, նորից առաջարկվում եւ ոչ մի վերջնական լուծում չէր ստանում: Անցեալ տարվայ օգոստոսին վճոված էր յանձնել ճարտարապետին մակարդակ կազմելու, որ եւ ներկայացրվեց ժողովին նոյն տարվայ դեկտեմբերի 27-ին, որից երեւաց շինութեան ծախս 13,600 ռուբլի: Ահա այդ հարցն էր ընկնում այս վերջին ժողովում: Յայտնի դարձաւ, որ մեր կուրն ունի միայն 8,000 ռուբլի: Տեղի ունեցան երկար վիճաբանութիւններ: Անդամներից մի քանիսը պարզեցին այդ հիմնարկութեան անհրաժեշտութիւնը, ասացին, որ սա կը լինի քաղաքի զարդը, ամառանոց եկողների համար գրաւիչ, որ շինութեան մէջ կը կառուցվի նոր բեմ, որ անշուշտ կը գրաւէ աւելի լաւ ոյժեր գերասաններից եւ այլն: Վերջապէս, ամբողջ 2 ժամ կուրուց յետոյ, գաղանի քուէարկութեամբ, 53 ձայնով ընդդէմ 22-ի, վճովեց հասարակաց գրասենյակում կառուցանել ամառային կուրը, իր բոլոր յարմարութիւններով եւ բեմով:

ԲՈՍՏՈՎԻՑ մեզ գրում են. «Բոստօնի դուռնայում երեք հայ ձայնաւորներ կան՝ Կ. Բէլլէ-Շահինեան, Գր. Բախչիարայեան եւ Մ. Պալապանեան: Երեքն էլ շատ եռանդուն են, մասնաւոր առաջին երկուսը շարունակ գրաւում են հասարակութեան ուշադրութիւնը իրանց գործունէութիւնով: Պ. Բախչիարայեանը ստացաւ արժաթեայ մեդալ իր եռանդուն հասարակական գործիչը:

ԱՍԽԱԲԱԴԻՑ մեզ գրում են. «Թուրքեստանեան երկրի քաղաքացիական մասի բժշկական վարչութիւնը այս տարվայ յունվարի սկզբներին ներկայացրեց իր պաշտօնական զեկուցումը երկրի բնակչութեան մէջ 1900 թ. ընթացքում եղած հիւանդութիւնների մասին: Հաշուելով երկրի հետեւեալ հինգ չըմաններ՝ Սըր-Դարիա եւ Ամու-Դարիա, Սամարղանդեան, Ֆերգանեան, Անգրիկայեան եւ Սեմիթիւնեան, մօտաւորապէս 5,423,282 բնակիչներով, բժշկական օգնութեան դիմել են 479,979 հոգի: Հիւանդացոյնների մեծամասնութիւնը համաժարակ վարակիչ հիւանդութիւններ են ունեցել, գլխաւորապէս մալերիա, որից հիւանդացողների թիւը հասնում է 148,354-ի, երկրորդ տեղը բռնում է կալուի հիւանդութիւնը, որից հիւանդացել են 50,162 հոգի: Մալերիայից զու գնացողներն մեծամասնութիւնը Տաշկենտի չըմակցում ապրողներից են: Այդ գաւառում մալերիայի չափազանց տարածված լինելու պատճառը՝ մեծ տարածութիւն բռնող բրնձի արտերն են եւ ճանիճների մեծ քանակութիւնը: Վեներական ախտերով հիւանդացողների թիւը հասնում է 30,920-ի, որոնցից 14,861 հոգին բացառապէս սիֆիլիսիներ են: Սիֆիլիսը եւ ընդհանրապէս վեներական ախտերը գլխաւորապէս տարածված են տեղական հին ազգաբնակչութեան մէջ, իսկ այդ չըմաններում էլ շատ սահմանափակ է բուժիչ հիմնարկութիւնների թիւը:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Լուր է պտտում, որ համաձայն Բեսարաբիայի թեմակալ առաջնորդի առաջարկութեան եւ ժողովրդի բուռն ցանկութեան, մեր յաջորդ Մուշէ վարդապետը հեռանում է Նոր-Նախիճեանից: Ձեռք հաւատում, երեւի ժամը չէ եկած: Սա կայն լաւ կը լինէր, եթէ էջմիածինը ուշադրութեան դարձէր մեր յաջորդի վրա եւ վերջինը նրա խնդիրներին եւ գոնէ պարզէր նրան, որ եկեղեցու սպասաւորի համար աւելի լորդ է կուսակցութիւնը: Երբեք ժողովրդի եւ յաջորդի յարաբերութիւնները այնպէս լարված չէին, ինչպէս Մուշէի օրերով: Հինգ-վեց պարոններ չըմակցում են նրան, յաջորդը նրանց ձեռքի խաղալիքն է դառնել, եւ ժողովուրդը ստանում է ազգային հաստատութիւններից:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 20-ին Դաղանչեցոյ եկեղեցում Գառնակերեան եպիսկոպոսը երեք՝ այրուբեն միայն իմացող տիւրացոյնների քահանայ ձեռնադրեց: Ձեռնադրվածները պիտի քահանայագործեն մեր թեմի գիւղերում: Մի տարի չը կայ, որ յիշեալ եպիսկոպոսը 20 տգէտ տիրացոյնների քահանայապետ կուցանէ Երաշխացի: Եւ մօտիկ ապագայում գուցէ այդպիսիների թիւը աւելի բազմապատկիչ:

